ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՐՆԻՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 29-րդ կետերով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ և 63-րդ հոդվածների դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման, հիմք ընդունելով ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի մարտի 17-ի N 2/փ-58 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կորնիձոր բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում կատարել փոփոխություն և որպես առաջնահերթ միջոցառում,

1) պաշտպանական կարիքների համար, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերից 0.6 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-052-0003-0003-ից) փոխադրել հատուկ նշանակության հողերի կատեգորիա:

2) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար համայնքային սեփականություն հանդիսացող հատուկ նշանակության հողերից 0.49992 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-052-0004-0011) փոխադրել գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերի կատեգորիա՝ որպես վարելահող:

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրված հողամասը, պաշտպանական նպատակներով օգտագործելու համար անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվություն) օտարել Հայաստանի Հանրապետությանը:

3. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱԶԻԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐՄԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂՈՒԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՐԱԳԱԾ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԱՄ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ԼՈՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կոռնիձոր բնակավայրում գտնվող 0.6 և 0.49992հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխության համար առաջարկվող տարածքի իրավիճակային հատակագիծ

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի
ավագանու 2022թ. ապրիլի 14-ի
N 25-Ա որոշման



հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրվող 0.6 հա

	X	Y
1	8632065.3894	4380121.6419
2	8631988.6367	4380138.3712
3	8631991.1463	4380146.7692
4	8631991.5770	4380148.2103
5	8631995.4460	4380165.1506
6	8631995.7194	4380166.6263
7	8632000.4701	4380192.2770
8	8632001.5195	4380195.5565
9	8632080.6778	4380189.1153

գյուղ. նշանակության հողերի կատեգորիա փոխադրվող 0.49992 հա

	x	y
1	8631999.2095	4380624.1154
2	8631964.7132	4380640.9299
3	8632009.6295	4380734.7927
4	8632068.0810	4380706.0929
5	8632067.4963	4380705.1009
6	8632041.9404	4380656.9530

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՐՆԻՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

ՀՀ հարավ-արևելյան սահմանի անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտություն է առաջացել փոփոխելու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կորնիձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերից 0.6 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-052-0003-0003-ից) և հատուկ նշանակության հողերից 0.49992 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-052-0004-0011) հողամասերի նպատակային նշանակությունը:

Այդ նպատակով «Սյունիք-8» միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերում ներառված Կորնիձոր բնակավայրի համակցված փաստաթղթում նախատեսվում է փոփոխություններ և որպես առաջնահերթ միջոցառում ներառել.

1) պաշտպանական կարիքների համար, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերից 0.6 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-052-0003-0003-ից) փոխադրել հատուկ նշանակության հողերի կատեգորիա:
2) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար համայնքային սեփականություն հանդիսացող հատուկ նշանակության հողերից 0.49992 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-052-0004-0011) փոխադրել գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերի կատեգորիա՝ որպես վարելահող:

Նշված 0.6 հեկտար և 0.49992 հեկտար հողամասերը ՀՀ վարչապետի 2009թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 1-ի N 2/փ-28 դրական եզրակացության անհրաժեշտ է կատարել հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն:

Ելնելով վերոգրյալից Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կորնիձոր բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում փոփոխություն կատարելու, հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու և անհատույց սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը հողամաս օտարելու մասին» Տեղ համայնքի ավագանու որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՐՆԻՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻԸ ՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կորնիձոր բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում փոփոխություն կատարելու, հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու և անհատույց սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը հողամաս օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Տեղ համայնքի բյուջեի ծախսերում փոփոխություններ չեն առաջանա:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՐՆԻՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կորնիձոր բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում փոփոխություն կատարելու, հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու և անհատույց սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը հողամաս օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**